

ՊԵՐՐԻ ԻՐ ԱՅՑԵԼՈՒՆԵՐՈՒՆ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵՑ ՏԵՂԱԿԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պերրի երկվորյան ընդունեց ներքին գործոց և քաղաքացիական պաշտպանության նախարար Էլիաս Մըրը, որուն հետ քննարկեց Պապայուս - Ալեյ երեսփոխանական մասնակի ընտրութիւններու կայացման անհրաժեշտութիւնը Մըրը դիտել տուաւ, որ ժողովրդավարութիւնը պէտք է ըլլայ տիրական, որովհետեւ կը մնայ աւելի առողջ դրութիւն մը, քաղաքացիական համայնքը ընտրութեան կայացման:

Հանդիպումին աւարտին Մըրը յայտնեց, որ քննարկումի առարկայ դարձած է նաեւ էլեկտրականութեան տագնապը. ան նկատել տուաւ, որ եթէ կառավարութիւնը տար տարի առաջ սկսած ըլլար էլեկտրականութեան ընկերութեան ապապետականացման գործընթացին, ներկայիս նման տագնապ դիմագրաւելու հարց չէր մնար:

Պերրիի ընդունեց վարչական բարեկարգումի պետական նախարար Քարիմ Բագրատունին, որուն հետ քննարկեց վերջերս Փաղանգաւոր կուսակցութեան մէկ պատուիրակութեան Իրան եւ Թուրքիոյ կատարած այցելութեան արդիւնքները:

Հանդիպումին քննարկումի առարկայ դարձան նաեւ ընկերային - տնտեսական հարցեր, սկսեալ էլեկտրականութեան տագնապէն ու հասնելով Ընկերային Ապահովագրութեան Այգային Միտուկի տագնապին եւ ընկերային մարտի դժուարութիւններուն:

Հանդիպումին Պերրի եւ Բագրատունի բացարձակապէս մերժեցին յաւելնելու տուրքեր հաստատելու հաւանականութիւնը:

Պերրի յետմիջօրէին ընդունեց արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտը, որուն հետ քննարկեց Լիբանանի կողմէ որդեգրուած դիւանագիտական քայլերը, դիմագրաւելու համար իսրայէլեան մագլցումները:

Պերրիի այցելեցին նաեւ բանակի ընդհանուր հրամանատար Կոր. Միշէլ Սլէյման, պետական նախարարներ Սասան Տիպալ եւ Ապտէլ Ռահիմ Մրատ եւ Կեդրոնական Դրամատան փոխ կառավարիչներ Ալեյ Պալեան, Ահմէտ Հապշի, Մաժիտ Ժոնալաթ եւ Մարուան Նուլի:

ԿՈՒԶՈՒԻ	ԿԻԹԱՌԻ
● Ոսկերչական գործատեղի մը կարիքը ունի «office boy»-ի մը: Հեռ. 01 / 241424, 01 / 263355:	● Սոլիքժ եւ քերի: Հեռ. 03 - 709356:

ՀԱԼԷՊ ՀԱԼԷՊ

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Ժանէթ Գարրիէլեան
- Տէր եւ տիկին Տիգրան Գարրիէլեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Վրէժ Գարրիէլեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Նապիլ եւ Նելլի Հալապ եւ զաւակունք
- Տիկին Սոնիա Գարրիէլեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Սարգիս Գարրիէլեան եւ զաւակունք
- Տիկին Էմմա Գարրիէլեան եւ զաւակունք
- Տիկին Ժաքլին Գարրիէլեան
- Սուրէն Գարրիէլեանի զաւակները
- Վաչական Գարրիէլեան եւ ընտանիք
- Աղուն Գարրիէլեան եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Կարապետ Շահմիրեան եւ զաւակունք
- Տիկին Ազնիւ Սթանպուլեան եւ զաւակունք
- Տիկին Անահիտ Պազըրճի եւ զաւակունք
- Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ հարազատին:

ԱՆԴՐԱՆԿ ԳԱՐՐԻԷԼԵԱՆԻ (ԱՊՈՒ ՏԻԳՐԱՆ - Սասունցի, ծնեալ՝ Հալէպ, 1924ից)

մահը, որ պատահեցաւ Երեւանի մէջ, 12 Օգոստոս 2003ի առաւօտեան, Հալէպի մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Զորքերաթի, 13 Օգոստոս, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Հալէպի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցոյ մէջ, Սալիպէ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Հալէպի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցուակցութիւնները կ'ընդունուին բազմա արարողութեան ետք, եկեղեցոյ «Աղբալեան» սրահի մէջ:

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Լուսին Աշեան
- Տէր եւ տիկին Գէորգ Աշեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Հրաչ Աշեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Րաֆֆի Գասպարեան եւ զաւակունք
- Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, աներոջ եւ հարազատին:

ԳՐԻԳՈՐ ԱՇՃԵԱՆԻ (Ծնեալ՝ 1925ից)

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 8 Օգոստոս 2003ի երեկոյեան, Լոս Անճելըսի մէջ (Մ. Ն.), յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Զորքերաթի, 13 Օգոստոս, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Կլեմէնտի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցուակցութիւնները կ'ընդունուին նոյն օրը եկեղեցոյ սրահի մէջ:

ՀԱՐԻՐԻ ԵՒ ԲԸՐՏԱՇԻ ԱՐԾԱՐԾԵՑԻՆ ԲԶԻՋԱՅԻՆ ՇԵՆԱԶԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՊԱՊԵՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌՆՉՈՒՈՂ ՀԱՐՑԵՐ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկվորյան Քորայթէմի մէջ ընդունեց հաղորդակցութեան միջոցներու նախարար Ժան Լուի Քըրտահին, որուն հետ քննարկեց բիզնային հեռաձայնի ընկերութիւններու ապապետականացման առնչուած հարցեր, ինչպէս նաեւ նախարարութեան առնչուող խնդիրներ:



Հարիրի կ'ընդունի Քըրտու

Հարիրի յայտնեց, որ բիզնային հեռաձայնի ընկերութիւններու ապապետականացման թղթածրարը պիտի քննարկուի կառավարութեան ամառնային արձակուրդէն ետք գումարուելիք առաջին նիստին ընթացքին:

Վարչապետ Հարիրի ընդունեց առողջապահութեան նախարար Սլէյման Ֆրէնժիէն, որուն հետ քննարկեց

ընդհանուր հարցեր: Վարչապետ Հարիրիի այցելեց գաղթականներու եւ գաղթականութեան հարցերու նախարար Ապտալա Ֆարաք, ընկերակցութեամբ նախարարութեան ընդհանուր տնօրէն Ահմէտ Մահմուտի եւ գաղթականներու կեդրոնական սնտուկի նախագահ Ֆատի Արամունի: Քննարկումի առարկայ դարձան նախարարութեան կողմէ գաղթականներու տունդարձի թղթածրարին ցարդիրականացած ծրագիրները:

Հարիրիի այցելեցին նաեւ երեսփոխաններ Մոհամէտ Ալի Մէյս եւ Սամի Խաթիպ: Վարչապետ Հարիրի ընդունեց նաեւ Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինչըթ Պէթըլը, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային պարագայութիւնները:

ԱՐԻՏԻ ԸՆԴՈՒՆԵՑ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Մշակութի նախարար Ղապի Արիտի երկվորյան Պաղեստինի Ապատագրութեան ժողովրդավարական ձախտի մէկ պատուիրակութիւնը, նախագահութեամբ Ալի Ֆայսալի, որուն հետ քննարկեց շրջանային իրադարձութիւնները:

Արիտի շեշտեց, որ լիբանանեան դիմադրութիւնը պատ պիտի մնայ այնքան ատեն որ իսրայէլեան բռնագրաւումը կը շարունակուի: Իր յայտարարութիւններուն մէջ Արիտի նկատել տուաւ, որ ներկայ ժամանակաշրջանը կը պարտադրէ՝ քաղաքականապէս եւ դիւանագիտական առումով տիրական ներկայութիւն ըլլալ Լիբանանի թէ օտար երկիրներու մէջ:

Արիտի ընդգծեց, որ ՄԱԿը կը մնայ իրաւաստի միակ մարմինը եւ կոչուողեց գործարդելու ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին կողմէ տրուած բոլոր բանաձեւերը:

Արիտի այցելուց սալալին, որ Լիբանան կը հսկէ ՄԱԿի հետ իր յարաբերութիւնները, բայց կը պահանջէ անկէ նաեւ յաւելնել լրջութեամբ գործարդել իր իսկ տրուած որոշումները:

ՄԵԼԱՆՔԹՈՆ ԵՒ ՀԱՅԿ ԱՐՍԼԱՆԵԱՆ
ՃԵՄԱՐԱՆԻ ՍԱՆԵՐՈՒ ՖՈՒՏԻՆ

● Րաֆֆի Զիլէճեանի ընդ Նելլի Տեր Սարգիսեանի եւ Գօգօ Արփաճեանի ընդ Աճախտ Տեմիրճեանի ամուսնութեան արձանագրութիւնը
Ճեմարանի ծնողական խորհուրդի անդամներ 100,000 Լ. Ո.

ՄԱՀԱԶԴ

- Տէր եւ տիկին Պետրոս Պէշիբեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Թորգոմ Պէշիբեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Սմբատ Պէշիբեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Սարգիս եւ Լուսին Էրզրումեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Հայկ եւ Էլմաստ Գալֆայեան եւ զաւակունք

Տիկին Սիրուհի Օրուճեան եւ զաւակունք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ, մորաքրոջ եւ հարազատին:

ՍԻՐԱՆՈՒԾ ՊԷՇԻՐԵԱՆԻ (Ծնեալ՝ ՕՐՈՒՃԵԱՆ, 1921ից)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 10 Օգոստոս 2003, առաւօտեան ժամը 8:00ին, «Մար Եռուէֆ» հիւանդանոցին մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Հինգշաբթի, 14 Օգոստոս, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Հայաշէնի Ս. Յովհաննու կարապետ եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Լամուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցուակցութիւնները կ'ընդունուին նոյն օրը եկեղեցոյ սրահի մէջ:

ՀԱՄԹ ԺԱՄԱՆԵՑ ՊԵՅՐՈՒԹ

Պաղեստինեան իշխանութեան արտաքին գործոց նախարար Նապիլ Շաաթ երկվորյան Պէյրութ: Պէյրութի միջազգային օդակայանին մէջ Շաաթ յայտնեց, որ Լիբանան կ'այցելէ վարչապետ Ռաֆիք Հարիրիի իրաւերով եւ թէ Լիբանան կատարած իր պաշտօնական այցելութիւնը պիտի աւարտի յառաջիկայ Ուրբաթ օր:

Շաաթ յայտնեց նաեւ, որ ներկայ շրջանային լարուած կացութեան ընթացքին հարկ է հետեւողական ձեռքով տեղեկութիւններ փոխանակել, խորհրդակցութիւններ կատարել, ամէն ջանք ի գործ դնել կասեցնելու համար իսրայէլեան բռնագրաւումը եւ վերսկսելու խաղաղութեան գործընթացի կիրարկման: Ան այնչուց, որ Սուրիա - Եգիպտոս - Անտաքիան Արաբիա եռակողմանի խորհրդակցութիւնները դրական արդիւնքներ կրնան պարգեւել Պաղեստինի եւ Լիբանանի դիմագրաւած սահմանային հարցերու լուծման գծով:

Անդրադառնալով Լիբանան - Իսրայէլ սահմանային «Կապոյտ Գիծ» խախտումներուն Շաաթ ընդգծեց, որ իսրայէլեան կառավարութիւնը, զիջաւորութեամբ վարչապետ Արիէլ Շարոնի, կ'ուզէ տիրանալ հողին առանց յարգելու միջազգային օրէնքները կամ ստորագրուած համաձայնագիրները: Ան նշեց, որ իսրայէլեան արտաքինութեան կառավարութեան անհիշեալ ձեռքով իսրայէլեան ճնշումներով, իսկ նման ճնշումներ ապահովելու համար առաջին հերթին անհրաժեշտ է արաբական միասնականութիւնը, երկրորդ՝ արաբա-եւրոպական միացեալ կեցուածք մը եւ երրորդ՝ արաբա-եւրոպական միացեալ կեցուածք մը, որ պէտք է կարելիութիւն ստեղծուի պարտադրել ՄԱԿին՝ վերադառնալ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացի գործադրութեան:

Կը նախատեսուի, որ Շաաթ այսօր հանդիպում մը ունենայ իշխանութեան երեք պետերուն, ինչպէս նաեւ լիբանանցի իր պաշտօնակիցին հետ:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԿՐՆԴԾԵ ԿԱՐՉԱԿԱՆ...

Շարունակուած Ա. Էջեմ

Ընդգծեց, որ միջնորդի մը նշանակումը, որուն պարտականութիւնն է պետութեան եւ քաղաքացիին

միջեկապը պահել, անպայման պիտի վաւերացուի, որովհետեւ պետութիւնը - ժողովուրդը կապը կ'օժանդակէ երկրին բարեկարգութեանը: Ծրագրին, յատկապէս նկատուողներուն, որ միջնորդի այդ դերութիւնը բազմաթիւ երկիրներէ ղեկավարուած լիբանանցիներու մէջ նպաստած է միասնականութեան, կրճատած է «Բժիշկի» հետեւողական յարաբերութիւնը, ինչպէս նաեւ ամրապնդած է պետութիւնը - քաղաքացի կապը:

Նախագահ Լահուտ այցելեց արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտ, որուն հետ քննարկեց օտար դիւանագիտութեան հետ ունեցած անոր հանդիպումներուն արդիւնքները, ինչպէս նաեւ Լիբանանի զէմ իսրայէլեան ոտնձգութիւններուն մասին շրջալայցեալ խորհրդի, հետեւողական պետութեան միջազգային կազմակերպութիւնները:

Նախագահական պալատի այցելուներէն եղանակեալ նախկին նախարարներ, ինչպէս նաեւ Ֆրանսախօս երկիրներու կազմակերպութեան մէջ նախագահ Լահուտի ներկայութիւնը տրոջ-Շարլ Ռըզը:

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ 3ԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն 9:00.- «Ռատիօ Թահադուս», հեղինակ՝ Զահաբուդին. կը ներկայացնէ Մարի Ռոզ Մամուլեան եւ Մամուլ Մարգարեան

9:40.- «Առաւօտեան տոնս»

10:05.- «Բժիշկի» հետեւողական յարաբերութիւնը, ինչպէս նաեւ Լիբանանի զէմ իսրայէլեան ոտնձգութիւններուն մասին շրջալայցեալ խորհրդի, հետեւողական պետութեան միջազգային կազմակերպութիւնները:

11:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն

3:00.- Արաբերէն յայտագիր. հարցազրոյց հնգամսական բուժումներ կատարող Ինթիսար Սալեհի հետ, որ կը փոխանցէ այս մասին իրաւարկութեան իր գիրքին մասնաւորութիւնները

6:00.- «Դալար բարտի»՝ հայերէն հարազատ երգի մատուցում

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԿՐՆԴԾԵ ԿԱՐՉԱԿԱՆ...

«ԱԶԳԱԿ»-ԻՆ

Վարչապետ Պաղեստինի նախարար Նապիլ Շաաթի փոխարինողը օրաբար ինք կը սրանան նաև

Զարգացող, ամուսնական յարաբերութիւնը «Պաղեստին»-ը, «Անախիթ»-ը, «Նախապարտ»-ն ու «Ազգային-ամառներ»-ը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿՐՆԱԲ ՎՃԱՐԵԼ ԼՄՄԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԸ

«ԱԶԳԱԿ» օրաթերք. Շաաթի կողմէ կողմնակից

Հեռ. 01-260115, 01-241274, 01-258526

Fax : 01-258529

E-mail : aztag@inco.com.lb

website : www.aztagdaily.com

www.aztagdaily.com

ՕՊԵՅՏ ՊՈԼՈՒԹՆԻ ՀԵՏ ԱՐԾԱՐԾԵՑ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԵՐՋԻՆ ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Օպէյտ կը ներկայացնէ Պոլոթինը

Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտ երէկ ընդունեց Լիբանանի մէջ Ռուսիոյ դեսպան Պոլոթինը, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային իրադարձութիւնները եւ անոնց հանդէպ Ռուսիոյ կեցուածքները:

Հանդիպումէն ետք Պոլոթինը յայտնեց, որ Օպէյտի ներկայացուցած է Միջին Արեւելքի մէջ եւ Լիբանանեւ-իւրաջլեան սահմանին վրայ տեղի ունեցած իրադարձութիւններուն մասին Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան տեղեկագիրը:

Նշեալ տեղեկագիրով Ռուսիա մտահոգութիւն կը յայտնէ տիրող կացութեան մասին եւ կոչ կ'ուղղէ բոլոր կողմերուն զսպելու եւ ճնշելու մաղցողական քայլերը Լիբանան - Իսրայէլ սահմանին վրայ, որոնք իրենց կարգին կը դժուարացնեն նաեւ պաղեստինեւ-իսրայէլեան տագնապի լուծման համար առաջարկուած խաղաղութեան «ճամբու քարտէս»ի ծրագիրը:

Պոլոթին Օպէյտի փոխանցեց նաեւ Ռուսիա այցելութեան հրաւեր մը, Լիբանան - Ռուսիա երկկողմանի յարաբերութիւններու ամրապնդման նպատակով:

ՊՈՒԵՅՉ ԿՐ ԲԵՆԱԴԱՍԵ ՍԱՄԱՆԱՅԻՆ ԴԵՊԵՐՏՈՒՆ ՄԱՍԻՆ ՄԱԿ ԵՏՂԵԿԱԳԻՐԸ

Մարոնիներու նախարար Պոլոթին Օպէյտ պատրիարքը երէկ Տիմանի մէջ ընդունեց կենտրոնի նախարար Յարէն Պուէյլը, որ հանդիպումէն ետք յայտնեց, թէ հարաւային Լիբանանի վրայ իսրայէլեան ունեւորութիւնները արդարացուցիչ ոչ մէկ պատճառ ունին, այլ նպատակադրած են խախտել սահմանային եւ ներլիբանանեան կայունութիւնը: Ան աւելցուց նաեւ, որ այս գծով ՄԱԿի հաղորդագրութիւնը մտահոգիչ է, որովհետեւ կը հակասէ իրականութեան:

Անդրադառնալով ելեկտրականութեան տագնապին Պուէյլը յայտնեց, որ կառավարութիւնը կը յաջողի արմատական լուծում մը գտնել անոր:

Սֆէյր պատրիարքը ընդունեց նաեւ երեսփոխան Յուստ Սաստը, որ նկատել տուաւ, թէ ելեկտրականութեան տագնապին պատճառները զանազան են, կացութիւնը ամօթալի է, իսկ պատասխանատուութիւնը կ'իյնայ բոլորին՝ պաշտօնեաներուն, քաղաքացիներուն, ընդհանուր տնօրէնին, ուսանողի եւ ջուրի հարցերու նախարարին, ինչպէս նաեւ անբողջ կառավարութեան ուսերուն:

Անդրադառնալով Պապատ - Ալէյ երեսփոխանական ընտրութիւններուն Սաստ շեշտեց, որ ինք դէմ է համաձայնարար երեսփոխանի մը նշանակումին, որովհետեւ այդ ձեւով պատուութեան սկզբունքը կ'անտեսուի:

Տիմանի այցելուներէն շեշտեց նաեւ ընկերային հարցերու պետական նախարար Սաստ Տիպպէ եւ երեսփոխան Քապալան Իսա Խուրի:

ԲԱՆԻ ՄԸ ՏՈՂԻ

● ԸՆԴՀԱՆՈՒՐ դատախաչ Ատնան Ատտուն երէկ պաշտօնական գիր մը յղեց Միջազգային Ներում Կազմակերպութեան («Էմնըսթի Ինթըրնէշընըլ»), պատասխանելով անոր ամբաստանութիւններուն, ըստ որոնց, Տրնիիի միջադէպին գծով ձեռնարկները կ'ենթարկուին ֆիզիքական տանջանքի: Ատտուն շեշտեց, որ նշեալ ամբաստանութիւնները արտադաստիմաններ են, ընդգծելով, որ Տրնիիի միջադէպին գծով ոչ մէկ անհատ ձեռնարկուած է կառավարութեան քաղաքականութեան հանդէպ իրենդիմութեան կամ Լիբանանի մէջ տուրիական ուժերուն ներկայութեան դէմ արտայայտուելու պատճառով:

● ԱՇԽԱՏԱՆԻ նախարար Ասատ Հարտան երէկ ընդունեց Աշխատաւորական Ընդհանուր Համադաշնակցութեան նախագահ Ղասսան Ղարնը, որուն հետ քննարկեց սենտիքային եւ տնտեսական մարգերուն առնչուող հարցերը:

● ԱՇԽԱՏԱՆԻ նախարար Ասատ Հարտան երէկ ընդունեց Աշխատաւորական Ընդհանուր Համադաշնակցութեան նախագահ Ղասսան Ղարնը, որուն հետ քննարկեց սենտիքային եւ տնտեսական մարգերուն առնչուող հարցերը:

● ԱՇԽԱՏԱՆԻ նախարար Ասատ Հարտան երէկ ընդունեց Աշխատաւորական Ընդհանուր Համադաշնակցութեան նախագահ Ղասսան Ղարնը, որուն հետ քննարկեց սենտիքային եւ տնտեսական մարգերուն առնչուող հարցերը:

● ԱՇԽԱՏԱՆԻ նախարար Ասատ Հարտան երէկ ընդունեց Աշխատաւորական Ընդհանուր Համադաշնակցութեան նախագահ Ղասսան Ղարնը, որուն հետ քննարկեց սենտիքային եւ տնտեսական մարգերուն առնչուող հարցերը:

Հ. ԱԻԵՏ. ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Աստուծոյ ապահովելով՝ 2003 - 2004 տարեշրջանի սկզբնական արձանագրութիւնները, նախկին եւ նոր աշակերտներու համար, սկսած են եւ կը շարունակուին մինչեւ 31 Յուլիս 2003, ամէն օր առաւօտեան ժամը 8:30էն 1:00 (բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն): Օգոստոս ամսուան ընթացքին գրասենեակը բաց է միայն Չորեքշաբթի օրերը ժամը 8:30էն 12:00:

Նոր-կաշակերտները կը պահանջուի ա.՝ Վերջին երկու տարուան վիճակագրոյցը: Ինքնուրուագծեալ թուրքի լուսապատճեն գ.՝ Երկու նոր լուսանկար դ.՝ Բարի վարուց վկայագիր ե.՝ Նախկին վարժարանէն աշակերտին պետական թիւը՝ վաւերացուած:

ՎԵՐԱԵՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ տեղի պիտի ունենան առաւօտեան ժամը 10:00ին: ● Չորեքշաբթի, 17 Սեպտեմբեր 2003 - Լեզուական միութիւն ● Կինոգրաքի, 18 Սեպտեմբեր 2003 - Թուրքաբանութիւն եւ գիտական միութիւն ● Ուրբաթ, 19 Սեպտեմբեր 2003 - Պատմութիւն, աշխարհագրութիւն եւ այլ միութիւն

ՎԵՐԱՍՈՒՄՏ ա.՝ BREVET եւ BACC II Երկուշաբթի, 15 Սեպտեմբեր 2003 բ.՝ Երկրորդական, միջնակարգ եւ նախակրթարան - Չորեքշաբթի, 1 Շոկտեմբեր 2003 գ.՝ Մասնակարգութեւ Կինոգրաքի, 2 Շոկտեմբեր 2003 Սկստի ունենալ հետեւեալները: Գրախանութիւնը բաց է Երկուշաբթի, 8 Սեպտեմբեր 2003էն սկսեալ:

ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ

Աբրամ Շըճայէպը, Յուստ Սաստը եւ Անթուան Անտրոնուսը, որոնց հետ քննարկեց գիւղերու ճամբաներու նորոգութեան առնչուող հարցերը:

● ԸՆԿԵՐԱՅԻՆ հարցերու պետական նախարար Ասատ Տիպպէ երէկ զրկաւորեց ժողովի մը, որ կը նպատակադրէ աշխուժացնել հաշմանդաններու օժանդակութեան ծառայութիւնները: Ժողովին ընթացքին ան յայտարարեց հաշմանդաններու օժանդակութեան նպատակով նուիրուած գումարները:

● ՇԻՆՆԵՐՈՒ գերագոյն խորհուրդի փոխնախագահ միւսթի շէյխ Ապտէլ Էմիր Քապալան երէկ ընդունեց Լիբանանի մէջ Գերմանիոյ դեսպան Կուն-Յոր Բնայը, որուն հետ քննարկեց լիբանանեան եւ շրջանային իրադարձութիւնները, ինչպէս նաեւ Պէյրութ - Պերլին երկկողմանի յարաբերութիւնները բարելաւելու հեռանկարները: Քապալան այցելեց նաեւ երեսփոխան Ալի Օսէյրան:

● ԱՉԳԱՅԻՆ Ապատականներու կուսակցութիւնը երէկ խստի դատապարտեց Լիբանանի դէմ յաճախ կրկնուող իսրայէլեան ունեւորութիւնները, զիտել տալով, որ դիմադրութեան գործողութիւնները կ'իյնան Լիբանանի արդար իրաւասութիւններու սահմանէն ներս:

● ԵՐԵՍՏՈՒՆ Նասէր Քընտիլ իր երէկուան յայտարարութիւններուն մէջ ելեկտրականութեան տագնապը նկատեց հիմնական թղթածրար սկսելու համար փտածութեան դէմ պայքարի եւ աւելցուց, որ ելեկտրականութեան ընկերութեան հարցստուգութիւնը սեփականացնող իւրաքանչիւր անհատ պէտք է յայտնաբերուի, իսկ քաղաքացիներուն ոչ մէկ յաւելեալ տուրք պէտք է պարտադրուի:

● ՀԸՉԱՄԼԱՅԻՆ հոգեւոր պետ Մոհամէտ Հիւէյն Յատլայլա երէկ ընդունեց խորհրդարանի նախկին նախագահ Հիւէյն Հիւսէյնին, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային իրարարձութիւնները: Հանդիպումին աստիճանի Հիւսէյնի շեշտեց, որ տնտեսական տագնապի լուծման ի

Arabic header with logos for 'Orient Plus' and 'Jarna' and the title 'ԻՆՉ ԿՐ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԾԵՐԹԵՐԸ'.

12 Օգոստոսի լիբանանեան օրաթերթերը իրենց առաջին էջերով լուսարձակի տակ առած են Պապայի մէջ տիրող յարաբերական խաղաղութիւնը, իսրայէլեան բռնարարներու լուսին տակ փնտրուող երկարաձգման քննարկումներու մերժումը, Լիպերիոյ նախագահին հետաքննարկութիւնը Լիպերիային եւ Սուրիոյ, Եգիպտոսի եւ Սէուտական Արաբիոյ արտաքին գործոց նախարարներու հանդիպումը Գահիթի մէջ:

Լիբանանեան իրադարձութիւններուն գլխաւոր տեղը կը գրաւէ նախագահ Լահուտի անակնկալ այցելութիւնը ելեկտրականութեան ընկերութիւն եւ հարաւային Լիբանանի սահմանային վերջին պարգումներուն առնչութեամբ եղած կեց-ւածքներն ու անդրա-քարձները:

«Անուար» այս առընչութեամբ հարց կու տայ, թէ իսրայէլեան սպառնալիքներու սատակացումը արդեօ՞ք շրջանը պիտի վերադարձնէ իր երբեմնի սարսափի մթնոլորտին:

Ըստ թերթին, մայրաքաղաքը մթութեամբ պատելու քաղաքականութեան նպատակն է կառավարութեան սնտուկէն որոշ գումարներ քաղել իշախ ելեկտրականութեան ընկերութեան: «Սաֆիր»-ի համա-ժայն, Փաուրլ խնդրեց Շալոմէն, որ յարձակումները շարունակ-

ւին: Ըստ թերթին, իսրայէլեան ուժերուն թռիչքներէն կախեալ է ընդդիմութեան հակա-տիրող յարաբերական խաղաղութիւնը, իսրայէլեան բռնարարներու լուսին տակ փնտրուող երկարաձգման քննարկումներու մերժումը, Լիպերիոյ նախագահին հետաքննարկութիւնը Լիպերիային եւ Սուրիոյ, Եգիպտոսի եւ Սէուտական Արաբիոյ արտաքին գործոց նախարարներու հանդիպումը Գահիթի մէջ:

Լիբանանեան իրադարձութիւններուն գլխաւոր տեղը կը գրաւէ նախագահ Լահուտի անակնկալ այցելութիւնը ելեկտրականութեան ընկերութիւն եւ հարաւային Լիբանանի սահմանային վերջին պարգումներուն առնչութեամբ եղած կեց-ւածքներն ու անդրա-քարձները:

«Անուար» այս առընչութեամբ հարց կու տայ, թէ իսրայէլեան սպառնալիքներու սատակացումը արդեօ՞ք շրջանը պիտի վերադարձնէ իր երբեմնի սարսափի մթնոլորտին:

Ըստ թերթին, մայրաքաղաքը մթութեամբ պատելու քաղաքականութեան նպատակն է կառավարութեան սնտուկէն որոշ գումարներ քաղել իշախ ելեկտրականութեան ընկերութեան: «Սաֆիր»-ի համա-ժայն, Փաուրլ խնդրեց Շալոմէն, որ յարձակումները շարունակ-

«Սաֆիր»-ի համա-ժայն, Փաուրլ խնդրեց Շալոմէն, որ յարձակումները շարունակ-

Advertisement for Orient Plus and Jarna travel services, including flight details and prices.

Advertisement for Employment Department, Polyglot College, featuring job opportunities and contact information.

ԱՆՓՈՓՈՒՍ ՄՆԱՅ ՆԱԵՒ ՍՓԻՒՌ - ՎԱՅԱՍԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՌՈՅՅԸ

Հայաստանի Ազգային ժողովի նորընտիր նախագահ Արթուր Պաղտասարեան քաղաքացիներուն շնորհաբեր Սահմանադրութեան Օրուան - 5 Յունիս - առիթով: Իր խօսքերուն մէջ ան Սահմանադրութեան վերագրեց երկրի կայունութիւնը եւ ժողովրդավար համակարգի դոյատեւումը: Խորհրդային վարչակարգի տարիներուն զրկուած ըլլալով Ազգային Սահմանադրութենէ 8 տարի առաջ, 1995ին, ժողովրդային քուէով հաստատուած ան-

կախ պետականութեան համար կենսական այս փաստաթուղթը անկասկած յաղթանակ է հայրենի ժողովուրդին համար: Բայց մտահան պէտք չէ ընել նաեւ, թէ ի՞նչ պայմաններու մէջ ընդունուեցաւ Ազգային Սահմանադրութիւնը, ի՞նչ նշանակեց հայրենի հայութեան համար, եւ ի՞նչ անդրադարձ ունեցաւ համահայկական տարրոլթեամբ: Աւելին»

«Սոսնական» այս առիթի յիշեցումը 1995ին ի վեր գործող եւ միջոց ի գործը Ազգային Սահմանադրութեան առ-

կայունութեամբ դժբախտաբար կու գայ իր կարգին յուշելու, թէ այս տարւան զոյգ - նախագահական եւ Ազգային ժողովի - ընտրութիւններէն յետոյ դեռ որքան նոյնը մնացած է «մեր կեանքը»...

Արդարեւ, բացառիկ յիշողութեան տէր ըլլալու պէտք չկայ մտարբերելու համար, որ Ազգային Սահմանադրութիւնը 1995ին կեանքի կոչուեցաւ երբ Հայաստանի մէջ Հայոց Համազգային Շարժումը (ՀՀՇ) իրողապէս հաստատած էր նախագահական միահեծան իշխանութիւն: Սահմանադրութեան այն տարբերակը որ ժողովրդային քուէարկութեան հարթուան վրայ ընտրուեցաւ Արթուր Պաղտասարեանի նախընտրածն էր: Աւելին, Սահմանադրական ժողովի հրահրելու փոխարէն, կառավարութիւնը դիմեց ժողովրդային քուէի միջոցաւ գալիս վաւերացնելու միջոցին: Այս բոլորը կարելի եղան, որովհետեւ արդէն եօթը ամիս առաջ Տէր Պետրոսեան չէզոքացուցած էր ընդդիմութիւնը եւ արդիւրեւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գործունէութիւնը: Արդ, Դաշնակցութիւնը, նախկին նախագահին իսկ վկայութեամբ, աշխուժ եւ մասնակցութեամբ աշխատանք կը տանէր Սահմանադրութեան տարրերակի մը պատրաստութեան համար, եւ կենդանի կը պահէր հրապարակային ռա-

նախագահին գործը Սահմանադրութիւնը արագ մը անցնելու եւ իշխանութիւնը ամրակայելու ուղղութեամբ, եւ ժողովրդավարական միջոցներով Ազգային ժողովի մէջ, թէ հրապարակային ձեւով կը կասեցնէր ամէն հապճեպ նախաձեռնութիւն: Վերջնելով այդ զխաւոր խոչընդոտը, Տէր Պետրոսեան ճամբան հարթեց շատ ուղղահայեաց նախագահական համակարգ հաստատելու եւ իր իշխանութիւնը յաւերժացնելու ուղղութեամբ: Հետեւանքով՝ ժողովրդավարութեան որակն է, որ մեծապէս տուեց Հայաստանի մէջ, որովհետեւ Սահմանադրութեամբ նախագահին տրուած իշխանութիւնը այնքան շատ է, որ արդարեւ այնքան շատ է, որ պակեղորոն, հորիզոնական եւ ժողովուրդի լայն մասնակցութիւնը ապահովող ժողովրդավարական հաստատութիւններու կառուցումը անհեթեթ էր: Հասկնալի է, որ քաղաքական իշխանութեան այդ կեղծոնացումը նաեւ նախապայման էր երկրի հարստութիւնները քաղաքական ասպարէզ փոխադրելու, ինչ որ, փաստորէն, եղաւ: Թէ որքանով Սահմանադրութիւնը դեր ունի Հայաստանի մէջ հարստութեան այսքան անարդար բաժանման մէջ դժուար է

առարկայականօրէն ըսել: Բայց փաստը յայտնի է, որ այդ օրերուն, սեփականաշնորհման ալան-թալանով տեղ հասած Հայաստանի օլիկարգի կնեքը այնքան ալ տրամադիր չեն այդ Սահմանադրութիւնը փոխելու:

ԹՈՒՐՔԻՈՅ ՄՇՈՒՇՈՏ ՀԱՅԵԼԻՆ

1995ին ընդունուած Ազգային Սահմանադրութիւնը նաեւ նուիրականացուց Հայաստան-Սփիւռք երկուութիւնը՝ երկքաղաքացիութեան իրաւունքը մերժելով: Այն ժամանակէն իշխանութիւններու պատրուակը այն էր, որ երկքաղաքացիութիւնը մահացու պիտի ըլլար հայկական բանակին համար, որովհետեւ առիթ պիտի տար զինուորական ծառայութեան խուսափելու: Իրականութիւնը այն է, որ զինուորական ծառայութեան խուսափելու ուղղութեամբ երկքաղաքացիութեան չսպասեց: Յինիկօրէն դրուած, շատ հաւանաբար Հայաստանէն արտաքուլեմք մէկ միլիոն հայութիւնը այնքան ալ չէ հետաքրքրուած քաղաքացիութեան հարցերով, եւ, ինչպէս ամէն արտագաղթողի պարագային, եթէ կրցած է իր կեանքը իր արտագաղթած երկրին մէջ շտկել ու հանգիստը գտնել, ապա եւ Հայաստանի թէ նոր երկրի քաղաքացիութեան ընտրութիւնը այնքան ալ դժուար պիտի չըլլայ... Հապա Սփիւռքը: Իրականութեան մէջ Հայաստանի քաղաքացիութեան իրաւունքը խորքին մէջ հիմնականօրէն խորհրդանշական մեքս մը պիտի ըլլար: Իրապաշտ չէ մտա-

ծել, որ քաղաքացիութեան իրաւունքը դէպի Հայաստան ներդադրելի պիտի պիտի առաջացնէր: Ամէն պարագայի, հայրենիք վերադառնալ ուզողը, իր կարգին, քաղաքացիութեան իրաւունքին սպասելու պէտք չունէր: Բայց սպասուած կար, խանդա-

Խ. ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ
Շարք՝ էջ 10

ՆԱՍԱԿԱՆԻ

Պատուարժան խմբագրութիւն «Ազգակ» օրաթերթի,

«Ազգակ» օրաթերթի 9 Օգոստոս 2003 թիւի գրական էջին մէջ կարդացիմք գրական Անր աւուրներու մասին ընդհանուր խորհրդածութիւններ, որոնք հետեւեալ այսպիսով էին Անուրներէն երկու մտուշ. Սուրէն Չէքիճեանի «Ամառնային անձրեւ» արձակեմ հատուած մը, եւ Նանոր Ինճեհիկեանի բանաստեղծութիւններէն շարք մը:

Ուշադրութեամբ յանձնուած այդ մտուշներէն ընթերցողը այն տպաւորութիւնը կը ստանայ, որ այդ էջին խմբագիրը եղած է Քանատա եւ Հայէպ, եւ քանատահայ Սուրէն Չէքիճեան եւ հայէպահայ Նանոր Ինճեհիկեան անձամբ իրեն յանձնած են իրենց գրութիւնները, կամ Չէքիճեան եւ Ինճեհիկեան իրենց Պէյրութէն ելած եւ խմբագիրին տրամադրութեամբ տակ դրած են իրենց գրութիւնները:

Եւ կամ կը կարծուի, որ այդ մտուշները առնուած են նորերուն հրատարակած գիրքերէն:

Բայց իրականութիւնը այդպէս չէ: Եւ լաւ կ'ըլլար, ինչպէս Անուր ընթերցողը թիրխմացութեամբ չէր մատուցեր, եթէ յիշուէր այդ գրութիւններուն գրական աղբիւրը, անոնց առաջին անգամ տեղ տուած ու քաջալերած «Բագին»ը... Լաւ կ'ըլլար...

ԸՆԹԵՐՅՈՂ ՄԸ

ՄԵԾ ԻՐԱԿԱՐՁՈՒԹԵԱՆ

ՇԵՏԵԻԹԵՔ

BIG SALE

ՊՈՒՐՔ ՀԱՍՈՒՄ

5000 ՄԵԹՐ ՏԱՐԱԾՈՒԹԵԱՆ ԿՐԱՅ



Թ-Ի ՇԸՐԹ
6.000 Լ.Ո.



ՆԱԳՈՒՄՏ
8.000 Լ.Ո.



Թ-Ի ՇԸՐԹ
2.000 Լ.Ո.



Թ-Ի ՇԸՐԹ
7.000 Լ.Ո.



ՆԱԳՈՒՄՏ
2.000 Լ.Ո.



ՇԱՊԻԿ
10.000 Լ.Ո.



Թ-Ի ՇԸՐԹ
10.000 Լ.Ո.



Թ-Ի ՇԸՐԹ
5.000 Լ.Ո.



- ՏԱԲԱՏ 5.000 Լ.Ո.
- ԱՆԹԵՐ ՊՈՒՐՔ 2.000 Լ.Ո.



ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԶԵՒԻ
Թ-Ի ՇԸՐԹ 10.000 Լ.Ո.
- ԳԼԽԱՐԿ 2.000 Լ.Ո.



ՍԱՆՏԱԼ
4.000 Լ.Ո.



ԿՕՇԻԿ
4.000 Լ.Ո.



ԼՈՂԱԶԳԵՍ
9.000 Լ.Ո.

BIG SALE BRANCHES

- * ՀԱՍՐԱՍ
ՄԻՆԵՄԱ
ՓԻՔՍՏԵԼԼԻԻ ԿԻՅ
☎ 01 / 343343
- * ՆԱՊԱԾԻԷԻ
ՀՐԱՊԱՐԱԿ
☎ 03 / 949796
- * ՊԸՐԺ
ՊԱՐԱԾՆԷ
☎ 03 / 678501
- * ԱՆԹԻԼԻԱՍ
ՄԵՆԹՐ St. Elie
☎ 03 / 814161
- * ՄԱՐ ԷԼԻԱՍ
CLASS ՎԱՃԱՆԱՍԱՐ ԿԻՅ
☎ 03 / 602554
- * ՖԸՐՆ ԷԼ
ՇԸՊԷՔ
ՄԻՆԵՄԱ ՄԱՐԱՍ
☎ 01 / 294090

ԱՅՍ ԱՆԿԻՒՆԷՆ ԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ

Ա.

Բառը կ'ազդէ վրայդ․ սարսո՞ւռ, վա՞խ, գարձա՞նք, ուրախութի՞ւն թէ սքանչացում:

Մոնտիալիզացիոն - կոուլլալյոգէյշըն: Ի՞նչպէս թարգմանել․ երկրացո՞ւմ, երկրագնդացո՞ւմ, համաշխարհայինացո՞ւմ: Կ'ընտրեմ աշխարհայնացումը՝ նկատի առնելով որ աւելի կարճ է համաշխարհայինացումէն, թէեւ «աշխարհային»ը ուրիշ իմաստ մը, իմաստի երակ մը ունի: Գործածութիւնն է, սակայն, որ կրնայ նուիրագործել բառը՝ իր նոր իմաստով:

Եթէ բառը, իր ազդը գործածութեամբ, նոր է կամ նոր կը թուի, երեւոյթը նոր չէ: Մարդկութեան չափ հին է, իր թէ՛ ղրկական, եւ թէ՛ բացասական կողմերով:

Աշխարհին տիրապետել, եթէ ոչ զինուորական ուժով, ապա տնտեսական, մշակութային ազդեցութեամբ․ ի՞նչն է տարբեր Հնդկական կախարհական եւ ամերիկեան տիրապետութեան միջեւ:

Ճիշդ է, աշխարհայնացման ջատագովները զայն մեզի իբրեւ տիրապետութիւն չեն ներկայացնէր, այլ՝ համաշխարհային զարգացման միջոց, որ բոլորին՝ օգտակար պիտի ըլլայ: Ասիական արժեքի վարկած մըն է, որովհետեւ, ցարդ միայն բողոք եւ զժողովութիւն արտայայտուեցաւ, քան գոհունակութիւն՝ ճիշդ այն «բոլոր»ին կողմէ, որոնց ենթադրաբար պիտի ծառայէ աշխարհայնացումը:

Բայց ե՞րբ է, որ ազգեր, ժողովուրդներ ուրիշին կողմէ տիրապետուելուն համար գոհունակութիւն յայտնած են, նոյնիսկ եթէ այդ տիրապետութիւնը չափազանց դժգոհ չէ եղած, նոյնիսկ եթէ ան որոշ առաւելութիւններ բերած է, բարիքներ ընծայած է տիրապետուողին:

Իսկ աշխարհայնացման ներկայ ալիքը, որ աշխարհի գերպետութեանն՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներէն թափ կ'առնէ եւ կը տարածուի ամէնուրեք՝ այնքան տարբեր է հետաւոր անցեալի թէ մօտիկ անցեալի միւս աշխարհակալութիւններէն, որ կարծես կը ներկայանայ (կը ներկայացուի) իբրեւ մարդկութեան փրկութեան օղակ:

Եթէ ընդունինք, ինչպէս ըսի, որ վիճելի վարկած մըն է ստիկա, ապա եկէք մենք մեզի հարց տանք, թէ արդեօք իրապէս միայն բացասական կողմեր ունի այս շարժումը, եւ թէ պարտաւոր ենք ամէն զինով դատապարտել զայն, ու բոլոր ուժերով պայքարիլ անոր դէմ: Իսկ եթէ բացասական կողմերուն կողքին՝ դրական կողմեր այ կարելի է մատնանշել, այն ատեն լրջօրէն քննենք լաւ ու յուսի կողմերը, ու այնպէս միայն յանգինք մեր եզրակացութեան, եթէ արդար կ'ուզենք ըլլալ ու ճշմարտագոյտ:

Բայց ի՞նչ է աշխարհայնացումը, ի՞նչպէս կը սահմանուի ան: Ի հարկէ տարբեր մասնագէտներ տարբեր մեկնաբանութիւններ կու տան, սակայն ամէնէն ընդհանրացած առումով աշխարհայնացումը ամէն տեսակի ձեռնարկութիւններու տարածումն է ամբողջ երկիր մոլորակին վրայ, շնորհիւ աշխարհագրական եւ քաղաքական սահմաններու եւ մաքսային արգելքներու ջնջումի՝ թոյլ տալու համար ամբողջական ազատ փոխանակութիւնը: Այս սահմանումին մէջ երկու որակումներ կան, որոնց ուշադիր պէտք է ըլլալ․ մէկը՝ «ամէն տեսակի», միւսը՝ «ամբողջական»: Իսկ ի՞նչութիւնը կը կայանայ «ջնջում» բառին մէջ, քանի որ երկիրներ, ժողովուրդներ իրարմէ բաժնող, իրարու հակադրող, իրարմէ պաշտպանող, բայց նաեւ իրենց ինքնուրոյնութիւնը պահելու սատարող ազդակները աշխարհագրական եւ քաղաքական սահմաններն ու մաքսային արգելքները ջնջելու մասին է խօսքը: Կարելի է երկար խորհրդածել, թեր եւ դէմ խօսիլ այս հարցերուն մասին․ նպատակս նման քննարկման մէջ մտնելը չէ, սակայն:

Միւս իրականութիւնը, որ մտահան պէտք չէ ընել, աշխարհայնացման բազմակի բնոյթն է:

Կրնանք նշել, ի միջի այլոց, հետեւեալ աշխարհայնացումները․

- Տնտեսական եւ ելեւմտական:
- Լեզուական եւ մշակութային:
- Գիտական-արհեստագիտական եւ հեռահաղորդակցային:
- Աշխարհայնացման ներկայ պատկերացումը կը վերագրուի նոր ազատականութեան, որուն հետապնդած նպատակակէտերը կարելի է ամփոփել հետեւեալ եօթը կէտերուն մէջ․
- 1.- Ծուկայի գերակայութիւն:
- 2.- Սեփականութեան (սեփականատիրութեան) իրականը:
- 3.- Սեփականին գերադասումը հանրայինին նկատմամբ:
- 4.- Մրցունակութիւն ի գին ամէն ինչի:
- 5.- Աշխատանքի ճկունութիւն (վայր, ժամանակ, պայմաններ):
- 6.- Ապրանքայնացում ամէն ինչի (ներառեալ) թրութիւնը, առողջապահութիւնը, մշակոյթը, ռեզիդուստութիւնը, եւ այլն):
- 7.- Անաստիանափակ ակճ:

Ան բոլորին վերջնական հանգրուանը, գերպատակը պիտի հանդիսանայ արհեստագիտական եւ տնտեսական համամոլորակային (համաշխարհային) կտաւի մը, ցանցի մը ստեղծուելը:

Ան որ պատմութեան ծանօթ է քիչ թէ շատ, անդրադառնայ անշուշտ, որ այս արեւունակ նորութիւն չկայ:

Աշխարհայնացման փորձեր չէին միթէ Մեծն

Ալիքսանտրի կամ Հնդկ կայսրութիւններուն հաստատումը: Կամ համաշխարհային հատողութեամբ ազդեցութիւն չէ՞ որ ունեցան իրենց ատենին միջնադարու զարգացումը, վերածնունդը, 15րդ եւ 16րդ դարերու նաւարկումներն ու շրջնաւարկումները երկրագունդին շուրջ, անոց իբրեւ արդիւնք՝ Ամերիկաներուն յայտնաբերումը, անոնց պատճառով՝ մանրէներուն մոլորակայնացումը... Ժողովուրդներուն գաղթերը, երկու աշխարհամարտերը, քարիւղի պատերազմը, տիեզերքի նուաճումը, վերջապէս՝ Պերլինի պատիկ փուլումը, խորհրդային կարգերուն քայքայումը եւ այլն, եւ այլն:

Ներկայ գործընթացը շարունակութիւնն է պարզապէս այդ բոլորին:

Իսկ այդ ներկան ինչո՞վ կը յատկանշուի: Առաջին հերթին՝ տեղեկատուական եւ հաղորդակցական նոր արհեստագիտութեամբ, որ մարդու կեանքին մէջ բերած եւ դեռ պիտի բերէ նոյնքան ծանրակշիւ, արմատական փոփոխութիւններ, որքան այրուբենի գիւտը հազարամեակներ առաջ:

Կան նաեւ այլ երեւոյթներ, որոնք կ'առնչուին աշխարհայնացման, եւ որոնք կրնան ցնցումներ յառաջացնել քաղաքակրթութեան պատմութեան ներկայ հանգրուանին:

Այդ երեւոյթներէն մէկը վարդապետութեանց վերացումն է եւ այն կատարեալ չփոթը որ կը ստեղծուի՝ աշխարհը հասկնալու եւ մեկնաբանելու մարդին մէջ (չփոթ՝ լեզուի, յղացքներու, հոգեկան տարբեր ճարտութիւններու, արժէքներու, չփոթ՝ իրականութեան եւ երեւակայական միջեւ, տնտեսական, իմաստասիրական եւ տարբեր առումներով):

Ծուկայի բացարձակ տիրապետութեան երեւոյթը, շրջանցելով կամ անդրանցելով մարդկային՝ բարոյական խղճի, մշակութիւնը եւ այլ հասկացողութիւնները՝ ստեղծուող տեղանային մէկ այլ երեսն է:

Տեսնենք, սակայն, ի՞նչ դրական եւ բացասական հետեւանքներ կրնան յառաջանալ այս բոլորին:

Բ.

Բարիք թէ չարիք... Ի՞նչ պէտք է ակնկալել աշխարհայնացման ներկայ շարժումէն․ մարդկութիւնը աւելի շահաւոր պիտի ըլլայ՝ անկէ, թէ ոչ մարդկութեան մէկ չնչին փոքրամասնութիւնը միայն պիտի օգտուի, ու ինքզինք պարտադէ, իսկ շախմատիչ մեծամասնութիւնը պիտի ենթարկուի այդ շարժումի վնասներուն, առանց օգուտելու անոր առաւելութիւններէն:

Երբ կը խօսուի աշխարհայնացման օգուտներուն մասին, կը նշուին երկու գլխաւոր մարզեր՝ տնտեսական ոլորտը եւ մարդկային-ընկերային ոլորտները:

Առաջինին պարագային մէջտեղ կը դրուի հետեւեալ վարկածը․ աշխարհայնացումը՝ ամբողջ աշխարհը բանալով անկաշխիչ փոխանակութեան առջեւ, զարկ կու տայ մրցակցութեան: Մրցակցութեան շնորհիւ կը բարելաւուի ապրանքներուն որակը: գերազանցութեան որոնումը կը դառնայ յանուր մարդկութեան ձգտումը, ինչ որ կը բարձրացնէ արդիւնակէտութիւնը, կը նուազեցնէ գիները: Աշխարհը կը վերածուի... առեւտրական դրախտի:

Այդ դրախտին մէջ տնտեսութիւնը կը կազմակերպուի եւ կը զարգանայ համամոլորակային տարողութեամբ, իւրաքանչիւր հաւաքականութիւն արտադրելով այն ինչ որ լաւագոյնը ինք կրնայ ստեղծել, եւ տեւական աճին շնորհիւ կը դիզուի անբաւ հարստութիւն: Օգուտը՝ համամարդկային:

Գալով երկրորդ պարագային, այսինքն՝ մարդկային-ընկերային ոլորտներուն, այստեղ այլ կ'երեւի տարբեր ազդեցութիւն մը, որ տարօրինակ է, չըսելու համար յարակարծական (paradoxe): Այսպէս, մինչ մէկ կողմէ կը տարածուէր գաղութատիրութիւնը, Եւրոպայի երկիրներուն կողմէ, նոյն ճամբով ալ տարածում կը գտնէին մարդկայնական գաղափարները՝ մարդկային իրաւունքներու, կնոջական իրաւունքներու, ժողովուրդներու իրաւունքներու եւ ազգերու իրաւունքներու, եւ ծայր կու տային ազատագրական շարժումները, որոնք աշխարհայնացման մէկ այլ երեսը կը հանդիսանային: Այսպիսով, արեւմտեան աշխարհի գաղափարները հող կը գտնէին, ապացոյցը հանդիսանալով այն տեսակէտին, որ աշխարհայնացում կը նշանակէ նաեւ արեւմտականացում:

Նոյնիսկ 1990էն ի վեր, բիրտ աշխարհայնացման մէկ հաւանոր համակարգին՝ Խորհրդային Միութեան փլուզումէն ետք, ականատես կ'ըլլանք անոր ամէնէն դրական հետեւանքներուն՝ ազգերու, կրօնքներու ու ցեղային ծագմանց ինքնութեան վերահաստատման՝ համայնավար տիրապետութեանէն ձեռքազատող հաւաքականութիւններու պարագային, եւ նոյն ատեն՝ ժողովուրդակալութեան, ժողովուրդավար կարգերու ընդհանրացման, թէկուզ սկզբնական այս շրջանին յաճախ առերեւոյթ կերպով պարզապէս:

Ուրեմն, բարիքը կրնայ նոյն ձեւով՝ աշխարհայնացման ճանապարհով տարածուիլ, ինչպէս չարիքը:

Իսկ չարիքի տարածումը, որ աւելի աջառու է, կ'ըլլայ աւելի արագ, աւելի լայնատարած կերպով, աւելի խոր առումով, եւ կ'ազդէ բոլորին, աշխարհի բոլոր ժողովուրդներուն, յատկապէս՝ մեծամասնութիւն հանդիսացող չունեւոր գանգուածներուն:

Այսպէս, արագ կ'աշխարհայնանայ դրամի տիրապետութիւնը, ոչ միայն խոշոր դրամագլուխի, այլեւ սեւ դրամագլուխի, յանցագործ խուճերու մաֆիայի:

Կ'անտեսուին գոյապահականման նուազագոյն սկզբունքները, կ'ապականի կենսոլորտը, կը խաթարուի մշակութային ոլորտը․ կ'ապամշակութայնանան ամբողջ հաւաքականութիւններ, կ'անհետանայ իրենց մշակութային ամբողջ հարստութիւնը: Նոյնը կը կատարուի երկրագործութեան պարագային: Անհետանալու սպառնալիքին տակ են տեղական ինքնութիւնները:

Ընկերային գետնի վրայ կը շեշտուի մանուկներուն եւ կիներուն շահագործումը, կը քայքայուին ընտանեակներ, բարոյական աւանդութիւններն ու հասկացողութիւնները, կը քանդուին համայնքներն ու առկայ հաւատարմութիւնները՝ իրենց տեղը զիջելով անհատական ինքնավարութիւններու, անհատապաշտութեանց, ետակերտութեան, շահամոլութեան, շահագրգռածութեան, անտարբերութեան:

Հարստութիւնը (նիւթական թէ տեղեկագրտական) կը կեդրոնանայ հետզհետէ փոքրացող փոքրամասնութեան մը ձեռքը (խոզումը կ'ընդլայնի, վիհը կը խորանայ հարուստներուն եւ աղքատներուն միջեւ), անոնք անհատ ըլլան, թէ հաւաքականութիւն: Կը ստեղծուին նոր եզրեր՝ ունեւորն ու չունեւորը իրարմէ տարբերելու համար - info-riches et info-pauvres (տեղեկահարուստներ եւ տեղեկաղքատներ):

Միջազգային, բազմազգային եւ անդրազգային մեծ ընկերութիւնները կը հակակռեւ նուկան, բայց ոչ միայն չուկան, որովհետեւ նախ եւ առաջ չուկան կը վերածեն կեանքի բոլոր ոլորտները, եւ տնտեսականը, եւ մշակութայինը, եւ ընկերայինը, եւ քաղաքականը: Արդարուն, ո՞վ կրնայ ընդդիմանալ նոր դրամատէրերուն․ ոչ մեծ պետութիւնները, ոչ ալ մանաւանդ փոքրերը: Նոյնինքն չուկայի անմիջական ազդեցութեան տակ կը գտնուին տուեալ երկրի մը քաղաքական ղեկավարները, որոնք միջազգային մարմիններէն օգնութիւն կը ստանան իրենց երկրի համար այնքանով, որքանով որ կ'արտօնեն մեծ ընկերութիւններուն «ամձրեւ եւ արեւ ընել» (faire la pluie et le beau temps) իրենց հողամասին վրայ:

Կ'անտեսուին անհատ քաղաքացիներ թէ կառավարութիւնները, կ'անտեսուին ընդհանրապէս հասարակութիւնները:

Մէկ խօսքով, աշխարհայնացումը կ'անտեսէ ազգը, որ ժողովուրդակալութեան գործադրութեան միակ հնարաւոր վայրն է, որ ընծայուած է անհատին:

Ուրեմն ի՞նչ ընել: Ընդունել իրողութիւնը եւ հաստուրի կացութեան հետ, թէ ոչ մշակել ինքնպահպանման-գոյապահպանման լուրջ ռազմավարութիւն եւ ընդդիմանալ:

Բայց որո՞ն ընդդիմանալ, կամ՝ ինչի՞:

Գ.

Այո, աշխարհայնացման չարիքներուն ի՞նչպէս պիտի ընդդիմանանք եւ բարիքներէն ի՞նչպէս պիտի օգտուինք:

2003ի Յուլիսի վերջնաօրութեան Մոնրէալի մէջ պիտի գումարուի Միջազգային առեւտուրի կայմակերպութեան գազաթի նախարարական հանդիպումը (այս հանդիպումը արդէն իսկ գումարուած է․ «Ա․»)։ Աշխարհայնացման ծիրին մէջ չուկաներու ազատականացման ընդդիմադիրները որոշած են բոլոր միջոցներուն դիմել՝ արգելելու համար այդ հանդիպման կայացումը:

Պայքարի ձեւ մըն է՝ ցոյցերով ու հաւաքներով խանգարել նման հանդիպումներ․ սակայն միա՞կ ձեւն է, եւ որքա՞ն արդիւնաւէտ է:

Փորթո Ալէկհէի մէջ, Պրագիլիւ, 2002ին գումարուած Միջազգային ընկերային Ֆորումը ուրիշ միջոց մըն է, որ աւելի արդիւնաւէտ ըլլալու հաւանականութիւնը ունի, քանի որ լուրջ քննութեան առարկայ դարձուց աշխարհայնացման հարցը:

Հարցը, սակայն, պարզապէս աշխարհայնացման դէմ կամ թեր ըլլալուն մէջ չի կայանար․ եթէ դէմ ենք՝ ինչո՞վ կ'ուզենք փոխարինել զայն, եթէ թեր ենք՝ ի՞նչպէս կրնանք բարելաւել զայն, քանի որ ամէն պարագայի բարեփոխման տեղ կայ յոտակ:

Եթէ պիտի ընդդիմանանք՝ ապա կրնա՞նք ապաշխարհայնացնել իրերու ներկայ ընթացքը, այսինքն կրնա՞նք ազգայնացնել ինչ որ միջազգայնացած է՝ հարց է:

Ապա, կրնա՞նք ընդլայնել մոլորակի հանրային ժողովրդավար տարածքը․ ժողովրդավարութիւնը աշխարհայնացնել...

Ամէնէն մեծ դժգոհութիւնը, որ աշխարհայնացումը կը յառաջացնէ՝ ազգերու եւ պետութիւններու գերիշխանութեան կորուստն է: Կարելի՞ է վերականգնել այդ գերիշխանութիւնը, ի հարկին շահակից կամ ճակատագրից ազգերու կամ պետութիւններու համարող ճիգերով ու ներդրումով․ բայց ատոր համար անհրաժեշտ է ժողովրդավարական հիմքերով քաղաքական լծակներ ունենալ:

Երկրորդ գլխաւոր հարցը մշակութային ինքնութեան կորուստն է, որուն կ'ենթարկուին յատկապէս փոքր հաւաքականութիւնները՝ ուղղուելով աշխարհայնացման ալիքի ջուրերով: Ակզրուեցը, որ բոլորին կողմէ ընդունելի պէտք է դառնայ՝ մշակութային այլազանութեան, բազմակիւթեան պահպանումն է, ոչ միայն իւրաքանչիւր ազգի կամ ժողովուրդի համար, այլ բոլորին համար: Աշխարհի հաղաղութեան հիմքը ա՛յս պէտք է ըլլայ․ փոխադարձ յարգանքն ու գործակցութիւնը՝ պահելու համար ինքնութեան պահպանման անհրաժեշտ կուռանները լեզու, կրօն, մշակոյթ, բարքեր:

Ներկայ ընթացքով աշխարհայնացումը վտանգած է տեղական ինքնութիւնները․ անոնք անհետանալու սպառնալիքին տակ կը գտնուին, եւ միակ լուծումը կը թուի ըլլալ ընդդիմութիւնը աշխարհայնացման չարիքին դէմ․ այդ ընդդիմութեան մէջ ալ պիտի երեւի տարբեր հաւաքականութիւններու ինքնուրոյնութիւնը․ պայքար պիտի զարգացնէ ազգերու ինքնութիւնը:

Սակայն, կայ նաեւ աւելի դրական մօտեցում մը․ ո՞չ թէ յարմարիլ կամ՝ ո՞չ միայն յարմարիլ, այլեւ՝ յարմարեցնել: Եւ ատոր իսազոյն օրինակը, որ ուղեցոյց կրնայ հանդիսանալ ոչ միայն մեզի՝ Նախեւ, այլ բոլոր «փոքր ածու»ներուն համար՝ մեր քրիստոնէացման պատմութիւնն է․ կրօն մը, որ ամէնէն աւելի պիտի ծառայէր աշխարհայնացման, ու ծառայեց ալ անկասկած, մեզի համար դարձաւ ինքնութեան պահպանման ազգակ․ լաւագոյնս օգտուեցանք անկէ, քանի որ իր պաշտպանած վարդապետութիւնը շատ կը պատշաճէր մեր հոգեմտաւոր արժէքներուն, սակայն նաեւ սեփական այրուբեն ստեղծեցինք՝ կուլ չեթթալու համար անոր աշխարհայնացման ձգտումներուն:

Մշակութային այլազանութեան պահպանումը կը պահանջէ քաղաքական կամք:

Քաղաքական կամք կը պահանջէ նաեւ սեփական տնտեսութեան պահպանումը եւ զարգացումը՝ յօգուտ ազգին եւ ազգը կամ պետութիւնը բաղկացնող իւրաքանչիւր քաղաքացիի: Ասիկա կը նշանակէ թերեւս վերադարձ դէպի գորաւոր հանրային մարզ մը կամ ուսումնասիրւած հաւասարակշռութիւն մը հանրային եւ սեփական (private sector) ոլորտներուն միջեւ: Յարկ ձգտումը եղբր էր նուազագոյնի իջեցնել կառավարութեան ներկայութիւնը՝ երկրի կեանքի զարգացման մէջ․ գաղտնիքը պիտի կայանայ ոսկի միջինը գտնելուն մէջ:

Աշխարհայնացում, այո՞, պայմանով որ հիմնուած ըլլայ արդարութեան վրայ՝ ընկերային թէ այլ մակարդակներու վրայ: Պայմանով որ ժողովրդավարութիւն ըլլալ՝ մասնակցական բնոյթով, տեղական յանձնառութիւններով, բայց աշխարհային պատասխանատուութեան գիտակցութեամբ:

Մասնաւոր՝ պայմանով որ աղքատութեան եւ անգործութեան վերացման ծառայէ՝ փոխանակ տարածումին եւ ընդհանրացումին:

Վերոյիշեալ հաստատումները մեզ կը մղեն մտածելու, որ աշխարհային ընկերութեան մը յառաջացման ենթակառուցք առկայ է, սակայն մտածուած կերպով չի կատարուի անոր կերտումը․ կը պակսին միտքը, կազմակերպական յղացքը, գիտակցութիւնը:

Աշխարհայնացումը կրնայ համայն մարդկութեան բարիք դառնալ, պայմանով որ ան ընդհանուրին ծառայելու կտակ կողմնորոշուի ունենայ եւ ծրագրուած կերպով զարգանայ:

Ի վերջոյ, այո՞, մոլորակին տարողութեամբ մարդիկ պիտի սորվին իրարու հետ համերաշխօրէն ապրելու արուեստը:

ՎԵՐԺԱՐՄԵՆ

- Յ. Գ. - Ներկայացուած՝ 9 Յունիսիւն, Պէյրուբի (Պուրե 2 ամուտ) Համազգայինի Լեւոն Կանց կեդրոնի մէջ տեղի ունեցած կլոր սեղաւանի:

«ԱԶԳԱԿ»-ի ՀՇՈԱԶՍԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»-ի ճետ կապուելու համար հետաձայնել հետեւ

Թուրքիա - Կարգապահ

ԱԶՐՊԵՅՃԱՆ ՄՏԱՀՈԳՎՈՒՈՒՄԻ ՄՕՏԱԼՈՒՏ ՓԼՈՒԶՈՒՄՈՎ

Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի անդամ չդարձած ԱՊՀ-ի հինգ պետութիւնները՝ Վրաստանը, Ուզբեկստանը, Ուզբեկստանը, Ազրպէյճանը եւ Մոլդովիան համախմբող «ՎՈՒՈՒՄ» տարածքային կազմակերպութիւնը կը գտնուի փլուզման սեմին: Այս կազմակերպութիւնը, որ ըստ Ազրպէյճանի ստեղծուած էր միացեալ ուժով մը Ռուսիան «վախցնելու» նպատակով, այդքան ալ արդիւնաւէտ չէ եղած իր առաքելութեան մէջ:

Այս մասին վերջերս արտայայտուեցաւ Մոլդովիոյ արտաքին գործոց նախարար Նիքոլայ Տուտոնը՝ յայտնելով, որ կը կասկածի կազմակերպութեան աշխատանքին արդիւնաւէտութեան վրայ: Ան աւելցուց, թէ ներկայիս Քիշինեւի մէջ արդէն կը քննարկուի Մոլդովիոյ մէջ ՎՈՒՈՒՄ-ի ապագայի ներկայութեան հարցը՝ նկատի ունենալով, որ Մոլդովիա գործնական չի վերցըներ եւ հեռու կը պահուի շարք մը ծրագրերէն, ինչպէս օրինակ՝ ուժանիւթի առաքման ծրագրերէն: Նմանօրինակ յայտարարութիւն մը նախապէս կատարած էր նաեւ Մոլդովիոյ նախագահ Նիքոլայ Վորոնին, իսկ կազմակերպութեան նկատմամբ պաշտօնական Քիշինեւի ժխտական կեցուածքը աւելի եւս ի յայտ եկած էր Ռուսիոյ պետական Տուժարի նախագահ Կենատի Սեւեդինովի Մոլդովիա այցելութեամբ: Վերջինս մայրաքաղաք Քիշինեւի մէջ յայտարարած էր, թէ ՎՈՒՈՒՄ յաջող կազմակերպութիւն չ'է, եւ անոր անդամներէն ոչ մէկը արդիւնքի հասած է մինչեւ օրս:

Միւս կողմէ, Ազրպէյճանի այս հարցին առնչութեամբ իր դիրքը ճշգրտած էր արտաքին գործոց նախարար Ապտալիյ Կոմիլովի միջոցով, որ պաշտօնական թաղանթի անունով անցնելով մարտի յայտարարած էր, թէ Ուզբեկստանի միայն ՎՈՒՈՒՄ-ի տնտեսական հեռանկարներով հետաքրքրուած է, բայց եւ այնպէս ներկայիս տնտեսական ծրագրերը հետապնդելէ շատ աւելի կարեւոր է միջպետական եւ ներքին խնդիրներու լուծումը:

Այս յայտարարութիւնները անշուշտ մինչեւ օրս որեւէ պաշտօնական որոշումի մը չեն յանգած, բայց անոնք կը յուշեն, թէ ՎՈՒՈՒՄ-ի փլուզումը մտաւորաւ է: Այս մէկը անհնարաբար կը պահէ Ազրպէյճանը, որովհետեւ կազմակերպութեան գործունէութիւնը կը համընկնի անոր շահերուն, ինչպէս յայտարարած է նախկին փոխվարչապետ Հիքմէթ Հաճիբազան: Հաւանաբար, Ազրպէյճանը աւելի եւս մտահոգողը Վրաստանի դիրքն է: Այսպէս, Պաքուի մէջ լրջ տենտոյ «էխո» պարբերաթերթը անհանգստութիւն յայտնած է այն հարցին կապակցութեամբ, թէ թիֆլիս կրնայ Մոսկուայի ճնշումներուն դիմաց տեղի տալով անդամադուրի Եւրասիական Տնտեսական Միութեան: Նման քայլ մը մեծապէս կը մտահոգէ Պաքուն, որովհետեւ ՎՈՒՈՒՄ-էն Վրաստանի հեռանալը մեծ վտանգ կը սպառնայ կազմակերպութեան ապագային, մանաւանդ որ Մոլդովիա եւ Ուզբեկստանը արդէն իսկ կը գտնուին կազմակերպութեան դուրս գալու ճամբուն վրայ:

Փաստօրէն, ազրպէյճանցի պաշտօնատարներ կը հաւատան, թէ այս կազմակերպութիւնը կրնայ Ռուսիոյ գլխացի պատճառով, բայց կազմակերպութեան միւս անդամները այդքան ալ համամիտ չեն Պաքուի կարծիքին: Աւելին՝ շատ մը ազրպէյճանցի քաղաքական գործիչներ համաձայն են այն կէտին, թէ կազմակերպութեան անդամներուն շահերը տարբեր են եւ անոնց ուղղակի արդիւնքները անբարոյն են համընկնի, ինչ որ վաւերաբար փաստ մըն է, որ հակառակ Ազրպէյճանի ջանքերուն, ՎՈՒՈՒՄ-ի փլուզումը այդքան ալ անկարելի երեւոյթ մը չէ, այլ ընդհանրական՝ բաւական մտաւորաւ է:

ԻԼՀԱՄ ԱԼԻԵԻՒՎԱՐԶԱՊԵՏ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԳԵՏԻՆ ԿԸ ՊԱՏՐԱՎԱՍԵ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԵԱՆ

4 Օգոստոսին Ազրպէյճանի խորհրդարանը վաւերացուց հիւանդ նախագահ Հայտար Ալիեւի որդիին՝ Իլհամ Ալիեւի վարչապետ նշանակումը: Ընդդիմադիր ղեկավարի մը կողմէ «ուժի շահագործում» կոչուած այդ քայլը, ճամբան կը հարթէ ուժի ժառանգական ձեռնով փոխանցումին՝ քարիւղով հարուստ կովկասեան այդ երկիրին մէջ:



Իլհամին նշանակումը ամէնէն յստակ նշանն է, որ ծերունի Հայտար Ալիեւին իշխանութեան ժամանակը վերջ կը գտնէ: Յուշիկ սկիզբէն ի վեր Ալիեւ կը գտնուի թրքապետական ղեկավարութեան հիւանդ դանդի մը մէջ սաստիկ հիւանդ վիճակի մը մէջ: Ըստ 2002ի ամրան սահմանադրութեան մէջ տեղի ունեցած փոփոխութեան մը, նախագահին մահուան մահ անկարողութեան մատուցելուն պարագային, վարչապետը կը դառնայ ժամանակաւոր նախագահ: Իլհամ եւ Հայտար Ալիեւներ իշխանութեան գլուխ եղող Նոր Ազրպէյճանի Կուսակցութեան թեկնածուներն են նախագահական ընտրութեան, որ տեղի պիտի ունենայ 15 Օգոստոսին:

Կարճ բանավէճէ մը ետք, խորհրդարանը վաւերացուց Իլհամին վարչապետի պաշտօնին նշանակումը 101 թեր եւ մէկ դէմ քուէներով: 125 անգամ հաշուող խորհրդարանին ընդդիմադիր երեսփոխանները պոչոքոքի են թարկեցին քուէարկութիւնը: Հրաժարած վարչապետ Արթուր Ռասիդովն պատճառ չտուաւ իր յանդիմանի հրաժարումին, հակառակ անոր, որ ան հետագային իր պատճառարանութիւնը հիմնեց «առողջապահական հարցերու» վրայ:

«Մուսաւաթ» Կուսակցութեան ղեկավար Իսախանովը այդ քայլը «ուժի շահագործում» նկատեց եւ նշեց, թէ ընդդիմադիր ուժերը պիտի պայքարին հաւասարակշիռութեան իշխող կուսակցութեան «քաղաքական խուսափում»-ները: «Ասիկա նոր արքայականութիւն խաղալու փորձ մըն է Ազրպէյճանի մէջ», զիտել տուաւ Լամպար պատկերասփիւռով մը ընթացքին:

Իր պաշտօնին բարձրացումէն ետք, պատկերասփիւռի պետական կազմակերպութեան նախագահ Իլհամը արձակուեց իր հօր քառնեք կոչելու «բացառիկ խելացի աւանդութիւններ» աւելցնելով, որ իր հիմնական նպատակը պիտի ըլլայ երկիրին մէջ կառուցութեան պահպանումը: «Մեր բոլորին նպատակը Ազրպէյճանը գործարար եւ տնտեսական ուժեղ երկիր մը դարձնելն է», նշեց Իլհամ: «Ես համաձայն չեմ որեւէ կտրուկ քայլերու եւ կը հաւատամ, որ ամէն ինչ աստիճանաբար պիտի տուաւ, որ կառավարութիւնը կրնայ ուժի միջոցներու ղիմել՝ արդիւնքը համար ընդդիմա-

դիր ղեկավարներուն «աղտոտ» նպատակներուն իրագործումը»: Իր տնտեսական առաջնահերթութիւններուն մասին հարցումներ ստանալով՝ Իլհամ Ալիեւ փորձեց խուսափել պատասխանելէ եւ պաշտպանողական կեցուածք որդեգրեց իր մասնագիտական կարողակներով: «Վստահաբար եւ բաւարար գիտութիւն հաւաքած եմ այդ մասին» մէջ (տնտեսութեան), նշեց նոր վարչապետը պատկերասփուռով հարցազրոյցին ընթացքին: «Ես պէտք է ամբողջապէս վերաբերեմ այդ մարզը, եւ ապա՝ կարենամ պատասխանել այդ հարցումին (տնտեսական առաջնահերթութեան մասին)», աւելցուց Իլհամ:

Իլհամ Ալիեւի անցեալի կառավարական փորձառութիւնը սահմանափակ է: Իր պաշտօնական կենսագրութիւնը կը նշէ, թէ ան ծնած է 1961ին, 1982ին աւարտած է Միջազգային Յարաբերութիւններու Մոսկուայի Գիտական հիմնարկը: Ազրպէյճանի քաղաքական եւ տնտեսական մարզերուն մէջ իր վերելքը սկսաւ, երբ Հայտար Ալիեւ իշխանութեան գլուխ եկաւ 1993ին: Մօտիկ անցեալին Իլհամ փոխ նախագահն էր պետական քարիւղի «Սոքար» ընկերութեան եւ առաջին փոխ տնտեսապետն էր Նոր Ազրպէյճանի Կուսակցութեան ընտրուած Եւրոպական խորհրդի խորհրդարանական վեհաժողովին: Ըստ «Թուրան» լրատու գործակալութեան, ան հրաժարուեց թէ՛ «Սոքար»-ի եւ թէ՛ վեհաժողովի իր պաշտօններէն:

Առայժմ, Իլհամ Ալիեւ, իշխող կուսակցութեան մնացեալ անդամներուն համոզումով, որ ալեհեր Հայտար Ալիեւ տակաւին պատասխանատուն է պետութեան ամէնօրեայ հարցերուն: «Ինչ կը վերաբերի նախագահին առողջութեան, ան լաւ վիճակի մէջ է: Ան ծրագրած էր վերադառնալ քանի մը օր առաջ սակայն բժշկական ռեզիւցիան պահել զինքը յաւելեալ բուժումի համար», 4 Օգոստոսին խորհրդարանին առջեւ նշեց Իլհամ՝ աւելցնելով, թէ՛ «սակայն եւ կը հաւատամ, որ ան Ազրպէյճան կը վերադառնայ մօտ օրէն»:

Համացանցային «Եւրոպայի» կայքէջը հարցազրոյցի ընթացքին հարցումներ արձագանքեց Իլհամին: «Ես հաւատամ, որ ան Ազրպէյճան կը վերադառնայ մօտ օրէն»:

Համացանցային «Եւրոպայի» կայքէջը հարցազրոյցի ընթացքին հարցումներ արձագանքեց Իլհամին: «Ես հաւատամ, որ ան Ազրպէյճան կը վերադառնայ մօտ օրէն»:

Համացանցային «Եւրոպայի» կայքէջը հարցազրոյցի ընթացքին հարցումներ արձագանքեց Իլհամին: «Ես հաւատամ, որ ան Ազրպէյճան կը վերադառնայ մօտ օրէն»:

ԻԼՀԱՄ ԱԼԻԵՒՎԱՐԶԱՊԵՏ ՈՂՋՈՒՆԵԼՈՒԻ ԵՐՏՈՂԱՆԻ ՔԱՅԼԸ ԿԸ ՔՆՆԱԴԱՏՈՒԻ

Իլհամ Ալիեւը Ազրպէյճանի վարչապետ նշանակելու ազրպէյճանական խորհրդարանին որոշումը ողջունողներուն շարքին առաջիններէն էր Թուրքիոյ վարչապետ Ռէճէփ Թայիփ Էրտողանը, որ այդ նշանակումը նկատեց «չատ յաջող եւ հեռանկարային»:

Էրտողանի այս քայլը վերջերս դատապարտուած է Ալիեւի ընդդիմադիրներուն կողմէ: Ընդդիմադիր մամուլը գրած է, որ Թուրքիոյ աշակցութիւնը բացասական հետեւանք պիտի ունենայ Անգարայի նկատմամբ Ազրպէյճանի ժողովուրդին վերաբերմունքին վրայ:

Իլհամ Ալիեւի նշանակումը դատապարտուած է նաեւ մտաւորականներու «Ամալ» շարժումին կողմէ:

Ամերիկեան «Ուոլ Սթրիթ Ճըրնլը» թերթը իր կարգին իշխանութիւնը հօրմէ որդւոյն փոխանցելու այս ոճը քննադատուած է:

«էխո» թերթը յայտնած է, որ Իլհամ Ալիեւի նշանակումը ձեռնտու է Ռուսիոյ եւ Արեւմուտքի համար:

Ազերի ընդդիմադիր թերթերը՝ վկայակոչելով միջազգային լրատուամիջոցները, գրած են, որ Իլհամ Ալիեւ «խաղամուլ եւ կնամուլ» է:

Միւս կողմէ, սակայն, Ալիեւի վարչապետ նշանակումը քարիւղի շրջանակներուն մէջ դրական ազդեցութիւն ունեցած է: Արդարեւ, Նիւ Եորքի «Եւրոպայի կրօն» կեդրոնի վերլուծաբանի կարծիքով, «Իլհամը ներդրողներուն համար կայունութեան եւ յաջողութեան ներկայացուցիչ է»:

ԻԼՀԱՄ ԱԼԻԵՒՎԱՐԶԱՊԵՏ ԱՆԳԱՐԱ ԿԸ ՀՐԱՒԻՐՈՒԻ

